

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
 Ե. ՓՈՐՈՍՅԱՆ
 ՆԱԽԱԿ ԿԱՐ ՈՐ ԵՒ Է ԳՐՈՒԹԻՒՆ
 ՊԵՏԵ Է ՈՒՂՂԱՆ ԱՌ
 Խմբագր. ԱՐՇԱՆՈՅՍ Իրագրի
 ԳԱԶԻՐԷ (Հասպոսկի)

Rédaction du journal arménien
ARCHALOUICE
 HABBANIEH LE CAIRE (ÉGYPTE)

ԱՐՇԱՆՈՅՍ

Լ Ր Ա. Գ. Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՒ ՇՐՄԱՐ
 Տարեկան, ողջ տ. սեկն. 60
 Վեցամսեայ » 35
 ՕՏԱՐ ԵՐԿՈՒՆԵ
 Տարեկան Ֆրանկ 20
 Վեցամսեայ » 12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆ ԿԱՆԽԻԿ Է
 ԵՒ ԹՂՈՒՏԱՐԻ ՅԱՆՔԸ
 Խմբագրութեան վրայ:

Խմբագրութեան ուղղուած
 գրութիւնք եւ չ'են սրուիր:

Հ Ա Ր Ց Ը (*)

Բ.

Ճրանասացիք վերջին չորս հինգ տարիները l'Affaire ըսելով (A գլխագիրը) կ'իմանային Տրէյֆիւսի խնդիրը. ես ալ այժմ «Հարցը» ըսելով Պատրիարքին յիշատակութեան խնդիրը ակնարկել կ'ուզեմ:

Ի՞նչ եղաւ այդ խնդիրը:

Մէկ կողմանէ՝ Գաղաքական ժողովը նիստ կ'ընէ և հանրագիրը Ազգ. ժողովոյ կը մատուցուի ի քննութիւն:

Միւս կողմանէ՝ ժողովուրդը պատուիրակներ կ'ուղարկէ Առաջնորդարանին: Հիներուն տեղ նորեր կ'անուանուին: Երկրորդ գնացք մ'է որ կ'սկսի գէպի Պէնի-Սուրէն:

Այս բոլորը ցոյց կուտայ թէ կայ շարժում մը երկու կողմանէ, և շարժումն ալ կենդանութեան նշան է:

— Alors!

Բայց հակառակ այս շարժման՝ այսօր խնդիրը հոն է ուր որ էր ասկից երկու ամիս առաջ. ի՞նչ է պատճառը: Պատուարժան Ազգ. ժողովը ի՞նչ կը մտածէ ընել այս մասին: Ի՞նչ կը խորհի ժողովուրդը:

Ոչ մին գիտեմ և ոչ միւսը:

Բայց ինչ որ գիտեմ — ինչպէս նաև ինձ հետ ու եւ անհատ, առանց պէտք ունենալու այս կամ այն խումբին վերաբերելու — այն ալ սա՛ է թէ՛ պէտք է որ խնդիրը լուծուի ընդ փոյթ ի նկատի ունենալով միայն ընդհանրութեան շահը, և ժամ առաջ բարձուի մէջ տեղէն այս գայթակղութեան քարը (pierre d'achoppement):

Բայց և թէ Առաջնորդարան և ժողովուրդ ունենան իրենց մասնաւոր հաշիւները, կամ թէ ուրիշ բառով, խնդիրը բոլորովին սարբեր տեսակէտէ քննեն, ի՞նչպէս համաձայնութեան մը յանգելու է այն ատեն that is the question,

Կրնայ պատահիլ որ Առաջնորդարանն ալ իւր փոքրիկ գիւնադիտական յարաբերութիւնները ունենայ օտար ազգաց հետ և չ'ուզէ այս տեսակ խնդրոյ մը պատճառաւ ցրտութիւն յառաջ բերել, այնպէս որ հոկտեմբերի նստաշրջանի վերաբայման՝ փո-

զովը — քիչ մնաց Բարդաւանը պիտի ըսէր — կարենայ ըսել les relations diplomatiques du Patriarcat avec les autres nations sont amicales (*), ինչպէս սովորութիւն է եւրոպական զահիճներու մէջ:

Բայց կատակը մէկ կողմ թողունք: Ստուգիւ կրնայ պատահիլ որ՝ Առաջնորդարանը ունենայ զօրաւոր պատճառներ Պատրիարքին յիշատակութիւնը շարունակելու համար, և ճիշդ ընդհանուրին շահն ալ այդ պահանջէ: Այդ պարագային ըստ իս ամենէն գործնական միջոցը զանոնք ժողովրդեան յայտնելն է, կա՛մ կիւրակէ օր մը Եկեղեցոյ մէջ ժողով մը գումարելով ազգայիններէ և ժողովականներէ և կա՛մ ժողովուրդը ներկայացունող պատուիրակութեան մը:

Աւելորդ է ըսել թէ՛ երբ ժողովուրդը տեսնէ թէ՛ կան լուրջ պատճառներ, բնական է չի պիտի ուզէ ծանրանալ այլ եւս այդ կէտին վերայ:

Բայց եթէ ժողովուրդը ունենայ առ այն իրաւացի գիտողութիւններ, և ժողովը չուզէ մտիկ ընել զանոնք, այդ պարագային՝ ինչպէս որ դատաւոր մը իւր պաշտօնին բերմամբ պարտաւոր է լսել իրեն ներկայացեալ ու եւ է դատ և վճռել ըստ այնմ. այնպէս որ եթէ առարկէ թէ օրէնքը լուծ է, միջին և կամ անբաւական այդ մասին և զանայ դատը տեսնելը, այդպիսի դատաւոր մը դատի կ'ենթարկուի «իրաւունքի զլացման» յանցանքով (déni de justice) նոյնպէս ալ վարիչ մարմնոյն վերայ կը ծանրանայ պարտականութիւն մը՝ յի պատասխանատուութեամբ ուսկից չի կրնար խոյս առլ՝ որ է, լսել իրեն ներկայացեալ ամէն խնդիր և տնօրինել զարժանն ԱՐՄԱՐՈՒԹԵԱՐԻ. իսկ այն ժողովականը որուն համար ծանր կուգայ այս տեսակ հագեր, բնական է իրեն ուրիշ բան չի մնար ընել այլ միայն թողուլ ու հեռանալ ազկից. ոչ ոք հակառակ իւր կամայ կրնայ պահուիլ հոն:

Փափաքելի է որ գտնուի ժամ՝ առաջ համաձայնութեան կուռն մը, որ գոհացունէ միանգամայն թէ՛ Առաջնորդարանը

(*) Պատրիարքարանի գիւնադիտական յարաբերութիւնք օտար ազգաց հետ բարեկամական են:

և թէ՛ ժողովուրդը. որով առաջինը անել ճամբէ մը դուրս ելած կը լինի, և երկրորդն ալ հանգարտած:

Խարխիս մը՝ որով երկու կողման անձնատիրութիւնները վիրաւորուած չի լինին. ի մի բան, վերջապէս, համաձայնութիւն մը փոխադարձ շօշոյղութեամբ:

Խնդիր մը՝ որ չի կրնար արդարացունել եղած այսքան վրդովումները՝ այդ ալ ապահովաբար այս «յիշուի չի յիշուի» խնդիրն է:

ՅԱՐ. Լ. Ս. ՇԱՄԼԵԱՆ

Կ. ՊՈՒՍՈՅ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՐՔԸ

(Շար. Եսխորդ թիւն և վերջ)

Ներսէսի յաջորդ Յարութիւն Պատրիարքը չեղեցաւ Ներսէսի նախաձեռնած քաղաքականութենէն: Արդարեւ իր առաջին գործը եղաւ հեռագրել Լորտ Սուրբաբիւնի թէ «Յակոբեանը որ այդ օրերը յիշատակագիր մը մատուցած էր Անգլիոյ արտաքին գործոց նախարարութեան», իր կողմէ պաշտօն մը ստացած չէ թուրքոյ Հայոց անունով խօսելու եւ թէ՛ բարենորոգումները՝ որոնց համար կը դիմէր Յակոբեան, արդէն Վե՛. ՍՈՒԼ-ԹԱՆԻՆ ՇՆՈՐՀԻԻ, հեռագրեալ գործադրութեան գոհացուցիչ շաւղին մէջ մտած են»: Այս հեռագրերը ժամանակին մեծ գայլոյթ պատճառեց հայ ժողովուրդին մէջ ո՛չ այնչափ Յակոբեանի դիմումներէն ու եւ է բարիք մը ակնկալութեամբ՝ որչափ վերջին հատուածին համար, որը կը նշանակէր թէ Հայոց Պատրիարքը բարենորոգումները Սոյթանէն միայն պիտի ակնկալէ, առանց դիմելու եւրոպական պատուութիւններուն: Իրօք ալ Յարութիւն Պատրիարքը մինչեւ վերջը ու եւ է դիմում չըբաւ զեսպաններուն, ամեն խնդրի համար միայն եւ միմիայն Բ. Դուռ եւ Պալատ կը դիմէր: Իւր օրով Պատրիարքարանը Եւրոպայի առջեւ կը կորսնցնէր այն կարեւորութիւնը որ ունէր Ներսէսի ժամանակ: Եւրոպական թերթերու մէջ հազիւ երբեմն կը գրուէր Հայոց Պատրիարքարանի գործերուն վրայ:

Թէպէտ Յարութիւն Պատրիարք Դրան առջեւ ազգին շահերը պաշտպանելու համար բաւական աշխատեցաւ եւ բաւական ազգու եւ կորովի ընթացք ունեցաւ ինչ ինչ կարեւոր խնդիրներու մէջ, բայց Դուռը երբեք կարեւորութիւն եւ գոհացում չտուաւ իր պահանջումներուն. ինչո՛ւ. որովհետեւ Դուռը լաւ գիտէր թէ ու եւ է պարագայի մէջ Պատրիարքը Եւրոպային չպիտի դիմէ, հետեւաբար եւ չպիտի վայելէ եւրոպական պաշտպանութիւն:

Յարութիւն Պատրիարք, հակառակ, ինչպէս ըսի, իր կարգ մը ազգու քաղաքականութիւն եւ ազգային կարեւոր տնօրէնութիւններուն երբեք ժողովրդականութիւն չվայելեց ազգին մէջ. որովհետեւ ժողովուրդը գիտէր թէ չեղած է Ներսէսի

(*) Շար. 16 թիւէն:

քաղաքականութիւնն, որը բովանդակ ազգը ընդ-
զըրկած եւ իւրացուցած էր:

Յարութիւն Պատրիարք ինքն ալ վերջ ի
վերջոյ հասկցաւ միմիայն Դրան զիմելու իր
հաշտարար քաղաքականութեան սխալը, ու
զառնացած սրտով գրեց իր վերջին ծանր թաք-
րիբը, որով կը համարձակէր նոյն իսկ Բարձրա-
գոյն Դրան յայտարարել թէ զՂ. սցած է իր նա-
խորդին քաղաքականութեան չհետեւելուն, այ-
սինքն Եւրոպայի չզիմելուն եւ ամէն բան Դոնէն
սպասելուն համար:

Եթէ սակայն Յարութիւն Պատրիարքի սխա-
լը Եւրոպային չզիմելուն մէջ միայն կը կայանար,
անոր յաջորդող Աշքեան Խորէն Պատրիարքը իր
նախորդն ալ փնտռել տուաւ Աշքեան ո՛չ միայն
Եւրոպային չզիմելը, այլ նոյն իսկ Դրան առջեւ
ալ չհամարձակեցաւ զօրեղ քաղաքականութեան
մը հետեւելու: Աշքեանի ժամանակ Հայոց Պատ-
րիարքարանի մը գոյութիւնը անգամ պիտի մոռ-
ցուէր Եւրոպայէն, եթէ յեղափոխականները չը-
լային ու գիտէնք թէ յեղափոխականութիւնը
ինչպէս վերաբերուեցաւ Աշքեանի եւ անոր
խորհրդատուներուն հետ Չարժեր աւելի խօսել
Աշքեանի վրայ Անցնինք:»

Իզմիրլեանով ներսէսի քաղաքականութիւնը
վերակենդանացաւ եւ նոյն իսկ աւելի բայորոյ
կերպարանք առաւ Իզմիրլեանի օրով Պատրիար-
քարանձ Բ. Դոնէն վերջ, Կ. Պօլսոյ ամենէն ա-
ւելի յաճախուած քաղաքական եւ զիւսնազիտա-
կան պաշտօնատուէն էր. Դեսպաններու եւ Պատ-
րիարքարանի մէջ տեղ յարաբերութիւնները գրեթէ
ամենօրեայ էին: Հայոց Պատրիարքարանը անգամ
մալ ստացած էր այն կարեւորութիւնը եւ նշա-
նակութիւնը որուն արժանի պէտք է ըլլայ 2 1)Յ
միլիոն Հայերը ներկայացնող ազգային հաստա-
տութիւն մը: Կը կարծէինք որ Իզմիրլեանէն վեր-
ջը ալ մէկ մալ Հրէից Խախտման չպիտի վե-
րածուէր Ազգային պատրիարքարանը Դժբաղչա-
բար սխալած ենք եղեր: Օրմանեան ո՛չ միայն չը
հետեւեցաւ ներսէսի եւ Իզմիրլեանի լուսաշաւիղ
ուղղութեան, ազգովին վաւերացուած քաղաքա-
կանութեան, այլ եւ իր «հաշտարար» հռչակուած
քաղաքականութեան մէջ գէթ Յարութիւն Պատ-
րիարքին չափ ալ չպահեց իր պաշտօնին արժա-
նապատուութիւնը. չօգտուեցաւ անոր դառն փոր-
ձառութիւնէն, ու Աշքեանին գլխուն եկածները
բաւականացաւ լրջութեամբ չի վերլուծեց. ամէն
բանի մէջ տեղի տուաւ Դրան կամայականու-
թեանց, Սուլթանի առջեւ ա՛յն աստիճան ստոր-
կացաւ, որ հլու հաճոյակատար եւ զիւրաթեք
գործիք եղաւ միշտ:

Պատրիարքական գահը բարձրացած առաջին
օրն իսկ, այնպիսի շողորթով եւ ստրկական ուղերձ
մը տուաւ Սուլթանին, որ Տեղի Նիւզ իր մէկ
խմբագրականով ջանաց մէկ անգամէն վերլուծել
անոր ամբողջ հոգեբանութիւնը:

«Հայերու Պատրիարքը, ըսաւ, կա՛մ աշխար-
հի ամենէն ստրկամիտ արարածն է կամ դարուս
ամենէն մեծ երգիծաբանը—որ կարող կըլլայ այս-
պիսի շողորթութիւններ ընել անո՛ր որ 300000
Հայեր խողովողել տուած է, երբ կոտորածներէ
ողջ մնացողներն ալ մասամբ բռնի իսլամացած են
եւ մեծագոյն մասամբ ալ անօթութեան մատ-
նուած»:

Օրմանեան մէկ բանի մէջ միայն հետեւեցաւ
իր նախորդներէն Յարութիւն Պատրիարքին, ու
զայն ալ գերազանցեց. Յարութիւն Պատրիարք
Լորտ Սողազըրիին ուղղեր էր վերջինիս հեռա-
գիրը. Օրմանեան Խաղաղութեան Համաժողովին
ուղարկեց իր համբաւաւոր ազգազաւ հեռագիրը:
Յարութիւն Պատրիարք, որը գէթ տարրեր կարգի
ազգային խնդիրներու մէջ լաւ աշխատութիւններ
ալ ունեցած էր, վերջին պահուն զղջաց իր սխա-
լին վրայ եւ հրապարակաւ խոստովանեցաւ: Արդ-
եօք յուսալու՞ ենք Օրմանեանէն գէթ այսչափ
ազնուութիւն մը. արդեօք կրնա՞յ ներուիլ մեզի
կարծելու որ այս վերջին օրերս իր սուած հրա-
ժարականը իր սխալը ճանչնալուն մէկ ապացոյցն
ըլլայ, եւ թէ իր սխալները եւ յանցանքները պի-
տի ուղէ քաւել պնդելով իր հրաժարականին վրայ
եւ երթալով մեկուսանալով Արմաշու վանքին
մէջ: Եթէ այո՛ ներկայ րոպէն թերեւս շատ ուշ
չէ ինքզինքն ազատելու համար աւելի մեծ ասոր-

նացումէ եւ վասնզներէ եւ Հայոց ապագայ սե-
րունդներուն անէ՞քէն:

Այսպէս, Օրմանեանի օրով Ազգային Պատրի-
արքարանը դարձեալ իր դիրքը եւ վարկը կոր-
սնցուց Եւրոպայի առջեւ. սակայն չնորհիւ Իզ-
միրլեանի թողած փհհաշուք համբաւին, գարձեալ
փոքր ի շատէ կարեւորութիւն մը կ'ընծայուի
Պատրիարքարանի գործերուն, եւ հակառակ Օր-
մանեանի մէկը միւսը գերազանցող անարժան ա-
բարքներուն, Եւրոպական թերթերը կը շարունա-
կեն, ինչպէս յօդուածիս սկիզբը տեսանք. Պատ-
րիարքարանի անձուքարձերուն վրայ երբեմն հե-
ռագրական տեղեկութիւններ հաղորդել:

Ահա այս անգամ ալ Բարիզի Թան լրագիրը
իր Սուպտմբեր 18ի համարին մէջ Օրմանեան Պատ-
րիարքի հրաժարականին առթիւ խմբագրական մը
նուիրած է հայկական գործերուն Այդ խմբագրա-
կանը թարգմանաբար լոյս տեսաւ: Արեւալոյս 18րդ
թուոյն մէջ:

Նշանակելի կէտ մալ:
Օրմանեանի Լահէ զարկած համբաւաւոր հե-
ռագրին մասին մինչև հիմա բացարձակ լռութիւն
պահեցին Եւրոպայի բոլոր կարեւոր քաղաքական
թերթերը ու հիմա միայն հրաժարելուն առթիւ կը
գրեն ու կը նշաւակեն այդ ազգազաւ գործը, մինչ-
դեռ սկիզբէն ի վեր մեծ համակրանքով խօսեցան
Լահէ կատարուած հայկական զիմուսներուն վրայ
եւ մանրամասն տեղեկութիւններ հրատարակեցին:
Եւրոպական թերթերու այդ խիստ նշանակալից
լռութեան վրայ պէտք է մտածէ Օրմանեան Պատ-
րիարքը եւ ամչնայ:

Օրմանեան այս անգամ անկեղծօրէն հրաժա-
րած ըլլայ թէ ո՛չ ազգին համար այլ եւս բարո-
յապէս մեռած է այն Իր սիրուր գործերը բազ-
մակողմանի կերպով երեւան կը բերուին Արեւ-
լոյսի էջերուն մէջ. ուստի այդ կէտի վրայ ալ չը
պիտի ծանրանամ:

Յօդուածիս նպատակն էր ցոյց տալ թէ ի՛նչ-
պիսի քաղաքական կարեւորութիւն եւ նշանակու-
թիւն կունենայ Եւրոպայի առջեւ Ազգային Պատ-
րիարքարանը, երբ Կ. Պօլսոյ աթոռին վրայ ունե-
նանք արժանաւոր Պատրիարք մը: Պատրիարքա-
րանի այդ բաղձացուած դիրքը զօրաւոր ազգակ-
ներէն եւ արտազրիններէն մէկը կրնայ ըլլալ հայ-
կական խնդրին գոհացուցիչ լուծման մը յանգիւղուն:
Ազգովին աշխատինք ունենալ ներսէսի եւ
Իզմիրլեանի արժանաւոր յաջորդ Պատրիարք մը
եւ Պատրիարքարան մը, որ հայ ազգի արժանա-
պատուութիւնը, իրաւունքները ո՛չ միայն թուրք
կառավարութեան ալ աշխարհի առջեւ ներկայա-
ցնելու եւ պաշտպանելու համապատասխան դիրք
մ'ունենայ:

Աղէքսանդրիա ՄՏՐԱԿ

ԳԱՅԻՐԵԻ ՀԱՅԵՐԸ

Սեպտ. 17ին Եկեղեցւոյ մէջ Պատրիար-
քի անուան յիշատակութեան առթիւ տե-
ղի ունեցած միջադէպին եւ ձերբակալու-
թեանց մասին Ազգ. Առաջնորդարանէ արը-
ուած տեղեկութեանց համեմատ Մուգաք-
րաւ նախորդ ուրբաթ եւ շաբաթ օրերը եր-
կու յօդուածներ հրատարակած էր, որոնց
թարգմանութիւնը թերթիս մէջ տեսնուե-
ցաւ: Տօքթ. Յակոբեան իւր տասներկու ըն-
կերներուն համամտութեամբն անցեալ Գշ-
օր (26 սեպտ.) այդ մասին պէտք եղած պա-
տասխանն ու բացատրութիւնները տուած է
ի դիմաց ժողովրդեան: Սոյն յօդուածին ի-
մաստը ամիսփ կերպով կը հրատարակինք
ի ստորեւ՝ անոր կցելով արաբ. թերթին
խմբագրութեան խորհրդածութիւնը բառա-
կան թարգմանութեամբ:

Ստորագրողը սա սողերով կ'սկսին ի-
րենց պատասխանը. «Մենք՝ եգիպտական
ժողովրդեան շատերուն հետ ներքին կա-
տարեալ դիտակցութեամբ քաջ համոզուած

ըլլալով թէ Մուգաքրաւ ճշմարտութեան
նեցուկն է ընդդէմ ստութեան, սրբարու-
թեան զօրավիգն՝ ընդդէմ անիրաւութեան
եւ հարստահարեալին պաշտպանը՝ ընդդէմ
կեղեքիչ բռնաւորին, կուգանք բաղխել ձեր
դուռը ինդրելով որ բարեհաճիք հրատա-
րակել մեր սոյն յօդուածը, որպէս զի ճշ-
մարտութիւնը երեւան գայ»:

Յօդուածագիրը յայտնելէ յետոյ թէ
ժողովրդեան եւ ժողովականներուն միջև հա-
կառակութեան առիթ եղող խնդիրը զուտ
կրօնական է, կը յաւելուն թէ Օրմանեան
Պատրիարք գործիք ըլլալով թուրք կառա-
վարութեան՝ ազգին դարաւոր առանձնա-
չնորհումները եւ իրաւունքները վտանգելու,
ոչնչացնելու պատճառ կըլլայ: Ուստի ար-
տասահմանի բոլոր հայերուն պէս Կահիրէի
հայ հասարակութիւնն ալ չուզեր այլ ես
զինքը օրինաւոր Պատրիարք ճանչնալ եւ ըստ
վաղնջական սովորութեան կը պահանջէ որ
անոր անուան յիշատակութիւնը գաղթի
պատարագի ստեն:

«Այս առթիւ կարեւոր կը համարինք,
կ'ըսեն յօդուածագիրք, յայտարարել թէ
մեր եկեղեցին ո՛չ թէ կղերական (clerical),
այլ ժողովրդական է, այսինքն ժողովուրդն
է որ կ'ընտրէ իւր հոգեւոր պետերը եւ ժո-
ղովուրդն է որ ի հարկին կը հրաժարեցնէ
զանոնք: Բացառութիւն են էջմիածնայ կա-
թողիկոսն եւ Երուսաղէմի Պատրիարքը, ու-
րոնց պաշտօնավարութիւնը ցկեանս է»:

«Արդ ժողովուրդը երբ կը տեսնէ թէ
Պատրիարքը անկարող է իւր իրաւունքնե-
րը պաշտպանել եւ կամ զեղծութիւնն ու ա-
նիրաւութիւններ կը գործէ, ըստ սովորու-
թեան Եկեղեցւոյ մէջ ձայն կը բարձրացնէ
ժողովուրդը անոր անուան յիշատակութեան
միջոցին՝ գոչելով «չլիշուի»: Այս ընկալեալ
սովորութիւնը ամենուրեք յայտնի է, —որն որ
բերանացի տեսակ մը քուէ կը համարուի—
եւ նոյն իսկ Օրմանեան երկրին մէջ նմա-
նօրինակ պարագաներ շատ անգամ տեղի
ունեցած են եւ թուրք կառավարութիւնը
այդ մասին ոչ միջամտած եւ ոչ ալ ձերբա-
կալութիւն ըրած է»:

Յետոյ մէջ բերուած է Արմենիայի 1890
փետր. 14 թուոյն մէջ հրատարակուած
լուրը, որով նոյն թերթը պատմած է թէ
Կալիթայի հայերը իրենց առաջնորդին
անուան յիշատակութեան ընդդիմացած են,
որով նա ստիպուած է առաջնորդական
աթոռէն հրաժարիլ: Եւ այդ պարագային
մէջ Հնդկաստանի Բրիտանական կառավա-
րութիւնը ո՛ր է միջամտութիւն չէ ըրած:

«Յաւալի է որ, կը գրեն, տեղույս ժո-
ղովականները ա՛յսքան յայտնի եւ ընդհան-
րացած սովորութիւն մը անգիտանալ կը
ձեւացնեն եւ ինդրոյն տարբեր կերպարանք
տալով ժողովուրդը կ'ամբաստանեն թէ ան-
գորութիւնը կը վրդովէ եւ խռովութիւն
կը յարուցանէ Եկեղեցւոյ մէջ՝ քաջ գիտ-
նալով հանդերձ թէ ժողովուրդը այսպիսի
պարագաներու մէջ սովորական եղած կո-
տնին կը հետեւի եւ ձայնը բարձրացնելով
ուրիշ բան չընեն, բայց միայն Պատրիար-
քին հրաժարեցումը կը պահանջէ, ինչպէս
ըրած են Աղեքսանդրիոյ մէջ, ուր պահան-

չած են որ պատարագիչ քահանան Պատրիարքին անունը չյիշէ, և ժողովուրդին կամքն ալ այնպէս կատարուած է:

«Եւ հոն ոչ ոք ժողովուրդը ամբաստանած է թէ Եկեղեցւոյ բարեկարգութիւնը խանգարած է, և սասիկանութիւնն ալ մէկը չէ ձերբակալած այդ բանին համար: Ասոր պատճառը շատ պարզ է. վասն զի Աղէքսանդրիոյ ազգային պաշտօնական մարմնոյն մէջ չկան թուրք կառավարութենէն կաշառուած պաշտօնեաներ, որոնք ցանկացող ըլլան պատուանշաններու և պատուատիճաններու (րիւթպէ):»

«Իմբագրութեանդ ըսուած է թէ գաղթական հայերն են որ Պատրիարքը ամբաստանելով չեն ուզեր, և տեղացի հայերը անոնց համամիտ չեն: Ճշմարտութիւնը սա է թէ այս կէտին մէջ գաղթական և տեղացի հայերու միջեւ անհամաձայնութիւն չկայ բնաւ, վասն զի ընդհանուր հայութեան հետ անոնց ալ պահանջումը միեւնոյն է, այսինքն Պատրիարքին հրատարակուածը:»

Ապա ստորագրողը յայտարարելով թէ ձերբակալութիւնը չէ թէ երեկոյին՝ այլ գիշերուան 9 1/2—10 1/2ի միջոցները Պէտր-Սուրբէնի սրճարաններուն մէջ և փողոցը տեղի ունեցած է, դառնապէս տրտունջ յայտնած են սասիկանութեան բիրտ ու ծայրայեղ վարմանցը դէմ, որով անմեղ մարդիկներ նախատած, հայհոյելով ծեծած են և մարդասպաններու պէս շղթայակալ բանտ առաջնորդած են զանոնք: Ձերբակալուողներուն մէջ կը գտնուէին երկու հիւանդ երիտասարդներ, որոնց մին հազիւ չորս ժամ առաջ հիւանդանոցէն ելած էին:

Գիշերուան այդ պահուն եղած այդ բազմաթիւ ձերբակալութենէն ընտանեաց մէջ տիրած սարսափն և ողբ ու կոծը նկարագրելով՝ յօդուածագիրը կը պատմեն թէ ինչպէս 40ի չափ անձեր գիշերանց Եկեղեցի կ'երթան Տէր Մամբրէ քահանային քով և զայն միասին առնելով սասիկանատու կը դիմեն բանտարկեալները աղատելու համար, սակայն ժամանակը արդէն անցած ըլլալուն բան մը ընել կարելի չըլլար, և վերջապէս հետեւեալ առաւօտուն սասիկանութիւնը ամենքն ալ կ'արձակէ առանց հարց ու փորձի:

Մոզաքքամի խմբագրութիւնը սոյն յօդուածին տակ հետեւեալ խորհրդածութիւնը կը յաւելու:

«Ձեռնհաս իշխանութեանց ուշադրութիւնը կը հրաւիրենք սոյն գործոյն առթիւ սասիկաններուն բռնած անվայել ընթացքին վրայ, որով իրենց պարտականութեան սահմանը անցած են և անմեղ մարդիկներուն հայհոյելու և կռուիներով զարկելու են:»

Արդարեւ քաղաքիս սասիկաններուն դէմ բողոքողներ խիստ շատ են և իրենց կամայական վարմանքին, անարգար խրատութեան և կեղեքումներուն դէմ գանգատներն անպակաս: Արդ կը յուսանք թէ քաղաքիս հրամանատար Վսեմ. Հարպի փաշա իւր ուշադրութիւնը անոնց վրայ դարձնելով կ'արգիլէ զիրենք ժողովուրդին չարիք գործելէ, և իւր ազգեցւածութիւնը ի կիրարկանելով զանոնք ուղիղ ճամբուն մէջ կը բերէ:

Վասն զի կարելի չէ որ ն. Վսեմութեան պէս անձ մը իրենց պետ գտնուի ու ժողովուրդեան բարքի ձայնը մինչև երկինք բարձրանայ, իբր թէ այդ պաշտօնեաները թուրքիոյ սասիկաններէն եղած ըլլային և կամ՝ թուրքիոյ նման բռնապետութիւն տիրող երկրէ մը եկած:

Թերթիս միջոցա հայերուն ըրած գանգատները եթէ ստոյգ ըլլան և հաստատուի թէ սասիկանները անմեղ մարդիկները շղթայի վարներով, հայհոյելէ, նախատելէ ու ծեծելէ վերջը բանտարկած են, արդարութիւնը և կարգապահութիւնը կը պահանջեն որ այդ սասիկանները շղթայի վարներն ու բանտարկուին, և ապա պէտք է զիրենք խարազանել:

Գարձեալ կ'իմանանք որ այդ անմեղ մարդոց սպառնալիք եղած է թէ առանց քննութեան և դատատանի երկրէն պիտի աքսորուին եթէ իրենց Պատրիարքին անուան յիշատակութեան ընդդիմանան: Սակայն թէ որ այդ ընդդիմութիւնը իրենց մէջ տիրող կանոնին վրայ հիմնուած է և եկեղեցական օրէնքին համահայն, չենք կարծեր որ այս եղիչին մէջ մէկը համարձակի անոնց ամենէն խեղճին ձեռք երկրնցիկը, քանի որ ապատութեան զօրավիզն եղող մեծ Տէրութեան մը աչքին տակ ապատութեան պրօչակը բարձրապանծ կը ծածանի այս հողին վրայ:

Իսկ եթէ այդ սպառնալիքը տեղույս Բաղաքական կամ Երեսփոխանական ժողովոյ անդամաց ոմանց ջանքերուն արդիւնքն է, և եթէ այդ մի քանի անդամներուն հայ Եկեղեցւոյ կանոնաց հակառակ (հակասահմանադրական) վարմունքը անձնական շահերու և նկատումներու սկնկալութեամբն է, ինչպէս ժողովուրդը կը պնդէ, անարակոյս չունինք թէ անոնք ամենանախար պատասխանատուութեան տակ կը մնան և այդ խտրութեան ու թշնամութեան երեսէն ո՛ր և է խեղճ անհատ մը հասած չարիքին ու քնասին իրենք պատասխանաբար են:

Իրենց համար լաւագոյն է որ արդարութիւնը ի գործ դնելով պատասխանատուութենէ զերծ ըլլան և իրենց անձնական շահերու սկնկալութեամբը խեղճերը կեղիքելէ ու տարաբաղդ անձանց չարիք հասցընելէ ետ կենան:»

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Առաջնորդական Փոս-Տեղապահին Եկեղեցւոյ բակը ասոր ու անոր տուած ապտակները կ'երեւի թէ տարափոխի օրինակ մը եղած են ապտակահարութեան և այնտեղէն մուտ գտած են մինչև ազգային վարժարանն ձեռամբ . . . Հոգաբարձու Պէյին:

Անաւասիկ եղևութիւնը Պատկ. Երեսփոխանական ժողովոյ անդամ, հայերէնի բողոքովին անձամբ ու քրահասիսուս և վարժարանի հոգաբարձութեան միակ անդամն ու Ստանապուլը (լաւագոյն է ըսել միապէս) միանգամայն, Եռուսէֆ Պէյ Աղիզի (տեղեք անուշին մէջ ալ հայու հոտ կա՞յ) անջի օրը վարժարան կ'երթայ. և որովհետեւ 9—10 ամիսներէ ի վեր վարժարանը՝ ուր կ'ուսանէ չէր, կ'ուզէ անչույս որ այդպիսի հազուադէպ այցելութիւն մը նշանաւոր գործով մը յիշատակելի ըլլայ: Ուստի իր ներկայութեան կը կոչէ Տրդատ Թիրեաքեան անուն աշակերտը որ շատերուն ծանօթ է իր բարի վարուքը, պարկեշտ ու հանդարտարարոյ բնուորութեամբն ու աշխատասիրութեամբը և անոր կը հարցնէ թէ ինչո՞ւ արարելն չ'կարդար Տրդատ ալ քաղա ավարտութեամբ կը պատասխանէ թէ՛ ինչը հայերէն և գաղղիերէն լեզուները միայն զօրով կը փոփաքի և թէ անցեալ տարու ընէ ի վեր գաղթած է արարելն գտնուուն հետեւելէ:

Պարագայ մը որ անմիտելի կերպով կ'ապացուցանէ թէ հոգաբարձու պէյը մասնաւոր նպատակէ մը գրգռելու և կանխամտածութեամբ այդպիսի հարցում մը կ'ընէր, պարզապէս սուրբ մը կը փնտռէր Վասն զի, թէ որ այդ լեզուին ուսուցումն ստիպողական էր, այնչափ ատենէ ի վեր այդ հոգաբարձու հոգաբարձուին ո՞ր միտքը կու-

գար այդ օրն ընելու իր հարցումը: Հոգաբարձու մեծ աղաւ կը հրամայէ որ անպատճառ ուսանի. ողան մը ո՞ր է պատասխան չ'տար Սակաւին յետոյ հոգաբարձուն մտնելով մեծաջոտ ապտակ մը կ'ի եյնէ տղուն՝ պոտալով. «Ես լսեցի որ գուն տղաքը անկարգութիւն ընելու կը դրդեն եղեր . . .» Եւ կ'արտաքսէ այդ խեղճ օրը տղան:

Ինչպէս ընթերցողը կը տեսնէ, գայլին ու գառնուկին դէպքն է որ կը կրկնուի սա տարբերութեամբ որ փոխանակ անմարդաբնակ ամայի դաշտի մը մէջ, առեւակի մը եղերքը տեղի ունենալու՝ վարժարանի մէջ ի հանդէս կուգայ եւ այն ալ հոգաբարձուի մը. դատաւորի մը միջոցա . . . ամօ՛թ և նախապի՛նք իրենց:

Հոգաբարձու պէյը կ'զգայ արդեօք իւր այդ ընթացքին ծանրութիւնը. դեռէ՞ արդեօք որ ոչ միայն բարեկրթութեան, այլ և դատարարութեան և բարոյականի նուիրական սկզբանց դէմ մեղադրուած է: Դատարարակութեան վրայ ամենատարրական գաղափար մը ունեցող հոգաբարձու մը իսկ, այդպիսի անձանք և անպատուաբար վարմունքի մէջ գտնուելէ պիտի զգուշանար:

Այդ հոգաբարձուն 14—15 տարեկան տղայ մը սրահին մէջ իւր փոքր աշակերտակիցիներուն առջև, տնօրէնին և դասատուին աչքին զիմացը սպտակելով, տղուն մէջ արժանապատուութեան և բարոյականի ամէն զգացում սպաննած, ոչընչացուցած է, մէկ խօսքով բարոյական մարդասպանութիւն մ'է այդ:

Այսպիսի քաղաքակրթիւնը ժամանակի մը մէջ արդարաւէր և լուսամտի կտորակութեան մը չէ ին տակ, կրթական հաստատութեան մը մէջ Հօրեմքայի մը վալորդ այս խժգո՞ւտ արարքին դէմ կ'արժէ որ խափաբողոքները և նոյն իսկ ձեռնհաս իշխանութեան ուշադրութիւնը հրաւիրենք:

Ընթերցողը գուցէ մտածեն թէ չափահաս և զգայուն ուսանող մը այդպիսի բարբարոս վարմունքի արժանանալու համար հարկաւ ծանր պակասութեան մը մէջ գտնուած ըլլալու էր:

Բայց ոչ, անգամ մը եւս կը կրկնենք թէ իրողութիւնը ճիշդ վեր պատմածուն պէս տեղի ունեցած է, և տղուն քեռայրը վարժարանի տընօրէնէն բացատրութիւն ուզած պահուն, տնօրէնը և զէպըր տեղի ունեցած ատեն հոն ներկայ եղող ուսուցիչը քանի մը հոգիներու առջև յայտարարած են թէ՛ տղան ո՛ր է, թէ յանցանքի կամ փոքրիկ պակասութեան մէջ չ'ը գտնուած. և թէ հոգաբարձու Պէյին այդ յեղակարծ ընթացքը իրենց արմանք ու զարմանք պատճառը:

Կը փորձուինք ժամանելու թէ արդեօք ազգային ինքրոյ առթիւ ժողովուրդեան այս կամ այն անհատին դէմ ունեցած կիրքերն վարժարանի անմեղ տղոցմէ՞ն յազեցնելու և հաշիւին կարգադրել կ'ուզեն(՞):

Միթէ այդ հոգաբարձուին երեսէն ազգային վարժարանին կրած նիւթական նամանաւանդ բարոյական վեհանքը բաւական չ'ու. բաւական չէ՞ որ իւր դատապարտելի անհոգութեամբը և անձեռնհասութեամբը պատճառ եղած է, որ ազգային մանկան առանց բան մը սովորու ժամուվաճառ ըլլայ և յուսահատ մեկնի այդ անկերպարան վիճակի մասնուած վարժարանէն: Եւ անաւանց մը վրայ կուգայ չար և անբարոյացուցիչ օրինակ մը ալ տղայոց: Հոգաբարձուն իւր այդ պատարակելի վարմունքովը նոյն իսկ տնօրէնին վարկը կտարած ու զայն անպատուած է յաչաչակերտաց, վասն զի եթէ երբէք տղան պակասութիւն մը գործած էր, հոգաբարձուն կարող էր տնօրէնին աշխարհիկ, որ պէտք եղած պատիժը սայ վարժարանի կանոնադրին ներած սահմանին մէջ, (եթէ սակայն կամոնազիւ կամ անոր գործադրութիւնը տեսնուած է վարժարանին մէջ . . .) քանի որ կրթութեան և կարգապահութեան հոգը անոր յանձնուած է:

Այս առթիւ մ. տքերնիս կուգա՞ն մանօրինակ դէպք մը, որ տեղի ունեցած է 97 Մայիս 21ին թէ՛ և. տնի ատեն բազմադիր մատուցուած է Բագաք. և նոյն իսկ Երեսփ. ժողովոց և անոնք գիտնալով որ հոգաբարձու պէյին ընթացքը անձան և անվայել է, մինչև ցարդ բողոքարկուին որոշ բան մը չ'են կարողացած պատասխանել պէյին խաբերը համար. սակայն կը լսենք թէ գտնէ հոգաբարձու պէյի ընթացքին յայտարար անուն մը գտած և իրենք իրենց մէջ փոխացած են . . . (Տե՛ր Պէյին):

(*) Այս աշակերտին քեռայրը անցիկ օր ժողովոյ ներկայացող ժողովրդական պատգամաւորութեան մէջն էր:

Արդարեւ Ասեմապետ-Հոգաբարձու պէյր, Գահրէի կրթական տարեգրութեան մէջ ինչ փառաւոր էջեր աւելցուց կարծ ժամանակի մէջ: Այդ պատիւնն ու փառքէն մաս եւ բաժին ունին վարչութեան բոլոր անդամք, որոնք Սիիմեոսի անտարբերութիւնը ցոյց կուտան ազգային վարժարանի մասին: Բայց յանցանքը ո՛չ այդ հոգաբարձուին է ո՛չ այ վարչութեանն. տեղւոյն անտարբեր ժողովուրդինն է որ դատարարական պէս կենսական խնդրոյ մասին անփոյթ ուշանոց կը զբոնուի է՛ն. ասանկ աննոգ ժողովուրդին՝ այսպիսի հոգաբարձու մը եւ այսպիսի ժողովականներ շատ խակ են:

Վերջին պահուն կը լսենք թէ, ապտակուած տղան կրած սաստիկ յուզումէն հիւանդացած է եւ անկողնոյ կը ծառայէ:

ՀԱՅ ԱՌԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ Ի ԳԱՀԻՐԷ

ԵՐԵՎ ՃԻՌԱԴ ԲԱԶՆՈՒԹՅՈՒՄ ՄԱՆՁԵՐՈՒ, ԱՂԶԿԱՆՑ ԵՒ ՄԱՆԿԱՊԱՐՏԻՁԻ

Մանչերու դպրոցը կը գտնուի Անգղիացուց վարժարանի շէնքին մէջ ի Պապէ-Սյուրբ:

Աղջկանց եւ Մանկապարտիզի համար զատ տուն մը յատկացուած է, որ կը գտնուի ի Հօշ-էլ-Եարզաւի, Տավուտիչէ:

Փորձառու ուսուցիչներու միջոցաւ պիտի աւանդուին Հայերէն, Անգղիերէն, Ֆրանսերէն եւ Արաբերէն լեզուները:

Մասնաւոր հոգածութեամբ ուժ պիտի տրուի Անգղիերէնի:

Մանկապարտիզի համար պատրաստ է մասնագէտ եւ փորձառու վարժուէի մը եւ մանկապարտիզի վերջին մէթոտներով ու դրութեամբ պիտի կրթէ մանուկները:

Մանրամասնութեանց համար դիմել, Տիար Հասի Փիլիպպոս Եպսկոպեանի ի Մէնչիչի: 13-15

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՌ

Օռօզի Պաֆ վաճառատան մօտերը, Կամե-էլ-Պենարի ճիւղ ղիմացը

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ.

Պատիւ ունին յայտարարելու թէ, վերջերս իրենց նմր բացած փուռին մէջ, անխարդախ ալիւրէ կը պատրաստուի ԳԱՂՂԻԱԿԱՆ, ԱՆԳՂԻԱԿԱՆ, ԳՆԻՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ հացեր: Սուրճի, թէյի եւ կաթի պարսիմաններ, եւ այլն: Եկաւօֆ եւ Ընկերութիւն մեծ ջանք եւ հոգածութիւն պիտի ունենան իրենց ղիմող բոլոր յաճախորդներն ըստ ամենայնի գոհացնելու:

Յանձնարարութիւնք ամենայն ճշգրութեամբ եւ փութով կը կատարուին: 3-50

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՊՕՂՈՍ ՄԱՆԿԱՊԱՐՏ

Վկայեալ տղական կառավարութեան եւ բժշկական վարժարանէն

Իւր բնականութիւնը հաստատած է ի Շարա Ապտուլ-Աղիզ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին ղիմաց:

Երկար ժամանակ իւր արհեստին կիրարկութեամբ ստացած փորձառութիւնը եւ տեղական կլիմայի պահանջներուն մասին ունեցած պիտակցութիւնը կարեւոր առաւելութիւններ են:

Իրեն ղիմողները կատարելապէս գո՛հ պիտի մնան: 6-24

ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՐԵՆ ՏԵՍԱԿ ԵՍՄԱՅՅՅԵՐՈՒ

ԳԱՀԻՐԷ. — Մաւրի փողոց, — ԳԱՀԻՐԷ Ս. Եւ Ս. Սեանալիի վաճառատան ղիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի եւ թօնաօր ընտիր տեսակէ բանտիւններու մեծ մթերք:

ԴԻՄՅԵՒՔ ՀՈՆ եւ պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց եւ կանանց ժամացոյցներ, աղամանդազարդ, ոսկի, արծաթ եւ ճիւղի:

Ֆրանսական եւ ամերիկեան ապրանքային նախնոր տեսակներէն զարդեղէններ, շղթաներ, օղեր, մասանիներ եւ այլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԻՒՍՏ ԶԱՓԱԻՈՐ 19-50

ՏՕՐՔՕՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄԱՐՈՅԺ Ակաթին, Շարէ Բուպրի, բիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու եւ հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ աղւաններ:

Կը զազրեցնէ վայրկեանապէս աղւայի ցաւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերովն:

Կը բուժէ լինտերու եւ բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած աղւաններուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ: 8-10

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԼԱԶԱՐԵԱՆ

ԱՊՏԻՆ ԿՈՇԿԱԿԱՐ ԱՊՏԻՆ Տայիբէի Սանիթի ճիւղ ղիմաց

Ամենաընտիր ապրանքներէ կը պատրաստէ խիստ կոկիկ, հաստատուն եւ ճաշակաւոր կոշիկներ, արանց, կանանց եւ տղայոց համար:

Գիները չափաւոր եւ աման: Փորձ մը միայնը բաւէ: 11-24

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ի ԳԱՀԻՐԷ ՇԱՐԱ ՄՕԶԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7 էն մինչեւ երեկոյեան ժամը 8 ը, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ եւ պիտի ընդունի ամէն լեզուէ տպագրական ամեն կարգի եւ տեսակի յանձնարարութիւններ. ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահազդեր, Հրախրագրեր, Այցեխարտեր, Յանկեր, Գիրտեր, տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոկետեր, Ընկերութեանց եւ վաճառականներու սպագրական ամեն պիտոյցներ:

Իւր տպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոստանայ յաճախորդները յաւանանալ ի գոհացնել գործերու մարտնչութեան, ճշգրտապահութեան եւ գներու չափաւորութեան մէջ:

Եզիպտոսի ո եւ է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն խնամօք եւ փութով կը կատարուին:

Տպագրութիւն Ս. Ա. ԴԱՐԲԻՆԵԱՆ

ԳՐԻԳՈՐ ՊԵՇԵՐԵԱՆ

ԿՈՇԿԱԿԱՐ Պազար Մուրուր Թիւ 39

Պատիւ ունի ծանուցանել թէ, իւր խանութը նարա Միւզէյինէն փոխադրած է ի Պազար Մուրուր: Ֆրանսական նորաձևութեանց յար եւ նըման կոշիկներ պատրաստելու մէջ իւր ունեցած հմտութեամբը մինչեւ ցարդ գո՛հ ըրած է իրեն ղիմող Պատ. յաճախորդներն:

Իւր դործածած ապրանքներու տոկունութիւնն երբէք տարակույս չ'վերցնել:

Իրեն եղած յանձնարարութիւնք ո՛չ միայն չափաւոր գներով, այլ եւ փութով եւ մեծ խնամով կը պատրաստուին:

Դիմեցէք, կ'թէ կ'ուզէք ճաշակաւոր հագնել եւ կոշտերէ (նասոր) ազատ մնալ: 14-24

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐՐԻԷ, ՎԷՔԱԼԷՔ-ԷԼ-ԱՍԱՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ (րաստըգ) սեւ, շագանակագոյն եւ ոսկեգոյն:

Սեւ ներկ շիշով վայրկեանապէս սեւցնող: Սոյն ներկերու սեւեղութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երաշխաւորեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերաթափութիւնը կը դազրեցնէ եւ մազերը կը ճոխացնէ: Նմանապէս ճաղատ (տազ) գլուխները մազ կը բերէ. 17 տարուան ճաղատ գլուխներու վրայ փորձուած եւ հիանալի արդիւնք տեսնուած է: Շիշը 8 ղըշ ողջ (2 ֆրանք):

Ճերմկցնող շուր շիշով, որը մարմնոյն բնական սպիտակութիւն կուտայ առանց զգացնելու: Եզիպտոսի մէջ միակը:

Ակուայի փոշի եւ շուր. մին մաքուր եւ ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող եւ ամրացնող:

Թող փութան օգտուել այն անձինք՝ որոնց գլխու մազերն ձկնած են տակաւ առ տակաւ թափել եւ օր մը ճաղատ ըլլալու վտանգին ենթարկուած են:

Կը գնենք, կը վաճառենք եւ կը փոխանակենք բոլոր սզգաց գործածած նամակադրոշմները: 7-8